«ԵՐԵՎԱՆԻ Լ.ԵՈՅԻ ԱՆՎԱՆ Հ. 65 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեման՝ ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՎԵՐԱԾՆՈՒՆԴԸ X-XIV ԴԱՐԵՐՈՒՄ

Մասնակցի անուն,ազգանունը՝ Հերիքնազ Մգրոյան

Դպրոցը՝ Արմաշի Մաղաքիա Օրմանյանի անվան միջնակարգ դպրոց

Դասավանդած առարկան՝ Պատմություն

ք.Արարատ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն---------- 3

Մշակույթը X-XIV դարերում---------- 4

Եզրակացություն---------- 18

Օգտագործված գրականության ցանկ---------- 19

Թեմայի դասավանդման մեթոդիկան---------- 20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մտքիդ թռիչքը հասել է տիեզերք,

Դարձել է տաճար,դարձել մագաղաթ,

Դարձել է խաչքար,նուրբ մանրանկար:

Միջնադարյան քո գոհարներով

Գերել ես սրտեր,գերել ես մտքեր:

Քո քազմադարյան ճոխ մշակույթը,

Դեմքդ է իրական ու այցեթուղթդ,

Որով արբենում ու հիանում են

Դարեր ու դարեր,բազում սերունդներ:

Հայկական մշակույթը X-XIV դարերում զարգացման բարձր մակարդակի հասավ:Մեծ զարգացում ստացավ գեղարվեստական գրականությունը, մանրանկարչությունը, ճարտարապետությունը և այլ բնագավառներ:Հայերն ունեին բազմադարյան մշակույթ և դրա զարգացմանը նպաստեցին մի շարք գործոններ: Դրանցից մեկը օտարի լծի թոթափումն էր և հայկական պետականության վերականգնումը: Բագրատունիները և Զաքարյանները Հայաստանում,Ռուբինյանները Կիլիկիայում խրախուսում, հովանավորում էին մշակութային ձեռնատիրությունները, որի արդյունքում բացվում են դպրոցներ, համալսարաններ, զարգանում էր բանահյուսությունը, գեղարվեստականությունը, գրականությունը, պատմագրությունը:

Նպատակ-Ճանաչել X-XIV դարերի ճարտարապետական կոթողները: Իմանալ կրթական նշանակալից դպրոցների մասին: Ուսումնասիրել նշանավոր պատմագիրներին, գրողներին, մանրանկարիչներին: Ուսումնասիրել դարաշրջանի մշակույթի զարգացման առանձնահատկությունները, դրան խթանող նախադրյալները: Կարևորել կրթօջախների դերը: Պետության զարգացման հիմքը տնտեսությունն է,իսկ տնտեսության հիմքը՝ դպրոցը,կրթությունը: Անգամ ամենածանր ժամանակներում, թեկուզ սուղ միջոցներով, վանքերը, նախարարական տները հովանավորել են դպրոցաշինությունը:

Կարևորել դպրոցների դերը,որպես հասարակության զարգացման խթանող ուժ:

Հայկական մշակույթի վերածնունդը X-XIV դդ

Մշակույթի զարգացման նախադրյալները

X-XIV դդ. բարձր զարգացման հասան նյութական և հոգևոր մշակույթի բոլոր բնագավառները: Մշակութային վերածնունդը պայմանավորված էր երկրի քաղաքական և տնտեսական առաջընթացով: Պետականության վերականգնումից ու ամրապնդումից հետո տնական խաղաղություն էր հաստատվել, բարգավաճում էր տնտեսությունը: Հայ թագավորները դպրոցական գործի, գիտության և արվեստի հովանավորներ էին:

Մշակութային վերելքը պայմանավորված էր նաև քաղաքային կյանքի վերածնունդով: Միջնադարյան քաղաքներն առաջ էին քաշում աշխարհիկ կրթություն ստացած, բնական գիտություններին, իրավագիտությանն ու բժշկագիտությանը տեղյակ մարդկանց մեծ պահանջ: Քաղաքներում ապրող մեծահարուստները հանդես էին գալիս որպես բարձրարվեստ գործերի պատվիրատուներ:

Մշակութային առաջընթացի կարևոր նախադրյալ էր նաև հարևան երկրների հետ բազմազան շփումների աշխուժացումը:

Դպրոց: X-XIV դդ. աճեց դպրոցների թիվը, ընդլայնվեց դասավանդվող առարկաների քանակը: Նախնական ուսուցումը կատարվում էր տարրական դպրոցներում, որոնք գործում էին խոշոր գյուղերում, վանքերում և քաղաքներում: Այդ դպրոցները, սովորաբար, պահվում էին եկեղեցու և պետության հաշվին: Կային նաև վճարովի մասնավոր դպրոցներ: Տարրական դպրոցներում աշակերտներին սովորեցնում էին գրել, կարդալ, հաշվել և երգել: Երեխաները դպրոց էին ընդունվում 12-13 տարեկանում և սովորում շուրջ 3 տարի:

Նոր երևույթ էր բարձրագույն տիպի դպրոցների՝ վարդապետարանների հանդես գալը: Վարդապետարաններում դասընթացի տևողությունը 7-8 տարի էր: Դասընթացը յուրացնելուց հետո սաները ստանում էին վարդապետի աստիճան և ուսուցչությամբ զբաղվելու իրավունք: Դասագրքերը ձեռագիր էին, չափազանց թանկ և փոխանցվում էին սերնդից սերունդ:

XI-XII դդ. հայտնի էր Անիի վարդապետարանը, որտեղ գործունեություն էր ծավալել Հովհաննես Իմաստասերը:Նա սովորել է Հաղբատի դպրոցում Դավիթ Ալավկաորդու և Գրիգոր Թոքատեցու հետ:

Հաղբատ

Հաջողությամբ ավարտելով դպրոցը,հայ մատենագրությունը լավ յուրացրած և հունական ու լատինական լեզուներին ու դպրություններին քաջածանոթ՝Հովհաննեսը մեկնում է Անի քաղաք,բացում դպրոց՝իր վրա վերցնելով նրա տնօրինությունը:Կենսագիրը նշում է ,որ Հովհաննեսը <<Իմաստուն մեղվի պես մտքում ամբարելով երանգ-երանգ ,տարբեր հոտի ու համի ծաղիկներ,բերեց իր քաղաքը,ծննդավայրը,քաղաքամայր Անի և փարթամությամբ լցրեց տունը>>:

Անիի Մայր տաճար

Նրա ուսուցչապետության տարիներին Անիի վարդապետարանը բազում շրջանավարտներ տվեց,որոնցից հայտնի են Երեմիա Անձրևիկը,Սամուել Անեցին,Ստեփանոս Զոմզոման և ուրիշներ: Նրա սաները կրթական գործը տարածեցին Հայաստանի տարբեր վայրերում:Հովհաննես Սարկավագը նաև բանաստեղծ է ր,իմաստասեր ,ստացել է նաև երաժշտական կրթություն:Նրա անվան հետ են կապված Ղևոնդյանց <<Պայծառացման >> շարականը և հարության <<Ծագումն փառաց >> տաղը:

Թանահատի վանք/Գլաձորի համալսարան

Հայաստանյան վարդապետարաններից ամենանշանավորը Գլաձորի համալսարանն էր, որը 1280-ական թվականներին հիմնադրեց Ներսես Մշեցին: Համալսարանը հովանավորում էին Պռոշյան և Օրբելյան իշխանները: Եսայի Նշեցու ուսուցչապետության տարիներին այստեղ սովորելու էին գալիս հարյուրավոր երիտասարդներ: Գլաձորում դասավանդումը կատարվում էր ժամանակի եվրոպական համալսարանների մակարդակով:Գլաձորի համալսարանի բարգավաճմանը նպաստել է Ստեփանոս Օրբելյանը,որի հաղորդումներից պարզվում է ,որ Սյունիքի առաջավոր մտավորականությունը չէր սահմանափակվում միայն եկեղեցական ու գիտական խնդիրների շրջանակներով,այլև վճռական դեր էին կատարում երբեմն ամբողջ հայ ժողովրդի շահերը շոշափող հարցերի լուծման ժամանակ: Երբ քաղաքական ու տնտեսական ծանր պայմանները հարկադրեցին դադարեցնել Գլաձորի համալսարանի գործունեությունը, նրա սաները տեղափոխվեցին Տաթևի համալսարան:

Տաթև

Այստեղ դասավանդում էին նշանավոր գիտնականներ Հովնան Որոտնեցին և Գրիգոր Տաթևացին: Փիլիսոփա և մանկավարժ Հովհան Որոտնեցին Գլաձորի համալսարանի փակումից հետո/1338թ./ հիմնադրեց նոր,Տաթևի համալսարանը,որը շուտով գերազանցեց իր նախորդին թե ուսանողների թվով և թե գիտա-մանկավարժական աշխատանքների թափով:Հետագայում նրա գործը շարունակեց իր մեծանուն աշակերտ,բացառիկ աշխատասեր ու մեծ եռանդի տեր գիտնական,իմաստասեր Գրիգոր Տաթևացին:Յուրացնելով և հարստացնելով իր նախորդների ուսմունքները,Գրիգոր Տաթևացին նշանակալից չափով ընդլայնեց միջնադարյան գիտության ավանդական շրջանակները և նոր մակարդակի բարձրացրեց Տաթևի համալսարանը,բայց հետագայում այդ վերելքն ընդհատվեց օտարերկրյա զավթիչների բռնություններով,ավերիչ պատերազմներով: Դպրոցը գործեց մինչև 1412թ.:

Գիտություն

<u>Պատմագրություն</u>

Բագրատունյաց Հայաստանի քաղաքական ու տնտեսական վերելքը պայմաններ ստեղծեց գիտության զարգացման համար: Բուռն ծաղկում ապրեց պատմագրությունը: Շարունակվեց «Հայոց պատմությունների» ստեղծումը: Դրանց հեղինակներն իրենց բուն աշխատությունն սկսում էին այնտեղից, որտեղ կանգ էր առել նախորդ պատմիչը: Այդպես շարադրվեց կաթողիկոս ու քաղաքական գործիչ Հովհաննես Դրասխանակերտցու «Հայոց պատմությունը»: Պատմիչների մյուս խումբը գրի էր առնում նաև հարևան երկրների պատմությունը՝ ստեղծելով «տիեզերական»

պատմություններ: Միջնադարյան պատմագրության այս ուղղության ներկայացուցիչներն էին Ստեփանոս Տարոնեցին և Վարդան Արևելցին: Պատմագրության մյուս ուղղությունը տեղական նշանավոր տոհմերի պատմության շարադրումն էր: Թովմա Արծրունին գրեց Վասպուրականի «Արծրունիների տան պատմությունը»: Առավել նշանավոր էր Ստեփանոս Օրբելյանի «Սիսական նահանգի պատմություն» մեծարժեք աշխատությունը: Այս ժամանակաշրջանում հայ պատմագրության մեջ սկիզբ առան նոր ուղղություններ: Պատմիչներն սկսեցին գրել ժամանակագրություններ և տարեգրություններ: Նրանք ըստ տարիների համառոտ շարադրում էին իրենց ժամանակաշրջանի իրադարձությունները: Կիլիկյան Հայաստանի պատմիչներից ամենանշանավորը Սմբատ Գունդստաբլն է, որի «Տարեգիրք»-ը պահպանել է Ռուբինյանների և Հեթումյանների ժամանակաշրջանի կարևոր դեպքերը:

Փիլիսոփայություն

Մեծ զարգացում ապրեց հայ փիլիսոփայական միտքը: Նշանավոր էր Գրիգոր Մագիստրոս Պահլավունին, որը, զորավար ու քաղաքական գործիչ լինելուց բացի, նաև բազմակողմանի կրթված գիտնական էր: Նա թարգմանում և մեկնաբանում էր հին հունական փիլիսոփայական աշխատությունները:

Հանրագիտարանային գիտելիքների տեր էր ականավոր փիլիսոփա ու տաղանդավոր բանաստեղծ Հովհաննես Իմաստասերը: Փիլիսոփայական կրթությանը մեծ ուշադրություն էին դարձնում Գլաձորի ու Տաթևի համալսարաններում:

Հովհան Որոտնեցու և Գրիգոր Տաթևացու աշխատությունները նշանակալից առաջընթաց էին հայ փիլիսոփայական մտքի պատմության մեջ:

Իրավագիտություն: Աննախընթաց զարգացավ հայ իրավական միտքը: XII դ. առաջին կեսին գրված Դավիթ Ալավկաորդու «Կանոնները» կարգավորում էին ընտանեկան ու կենցաղային հարցերը:

Հատկապես մեծ էին այդ ասպարեզում Մխիթար Գոշի ծառայությունները: XII դ. վերջին նա գրեց «Գիրք դատաստանի» օրենսգիրքը, որը կարգավորում էր հասարակական կյանքի բոլոր բնագավառները: Այդ երկը սկսել է թարգմանվել դեռևս միջնադարում և այսօր միջազգային ճանաչում է ձեռք բերել: Դրա հիման վրա հաջորդ դարում իր «Դատաստանագիրքն» է ստեղծել Սմբատ Գունդստաբլը: Նրա աշխատությունը հարմարեցված էր Կիլիկյան Հայաստանի առանձնահատուկ պայմաններին:

Բնական գիտություններ: Ժամանակի առաջադրած պահանջներով էր պայմանավորված նաև բնական գիտությունների վերելքը: Մաթեմատիկայի ասպարեզում կարևոր աշխատանք կատարեց Գրիգոր Մագիստրոսը: Նա է առաջին անգամ հայերեն թարգմանել Էվկլիդեսի «Երկրաչափությունը»: Ականավոր գիտնական Հովհաննես Իմաստասերը հարստացրեց ժամանակի թվաբանական գիտությունը, ուսումնասիրեց և բարեփոխեց հայկական օրացույցը:

Այդ դարաշրջանի հայ գիտնականներն զբաղվել են նաև կենդանաբանության, կենսաբանության և բժշկագիտության հարցերով: Հայ բժիշկներից ամենահռչակավորը Մխիթար Հերացին էր: Նրա «Ջերմանց մխիթարություն» աշխատությունը շարադրված է ժամանակի խոսակցական լեզվով, որպեսզի բոլորը «կարդան և օգուտ քաղեն»: Հայ բժիշկները հիվանդություններն ուսումնասիրելու նպատակով նույնիսկ դիահերձումներ էին կատարում, ինչն արգելված էր Եվրոպայում:

2. Վերածնունդը Արևմտյան և Կենտրոնական Եվրոպայի երկրների մշակութային և գաղափարական զարգացման, միջնադարյան մշակույթից նոր ժամանակի մշակույթին անցման դարաշրջանն է (Իտալիայում՝ XIV–XVI դարեր, մյուս երկրներում՝ XV դարի վերջ – XVI դար):

Վերածննդի (Ռենեսանս) մշակույթին բնորոշ են անտիկ մշակույթի հիմնական հատկանիշները, մարդասիրական աշխարհայացքը, անտիկ մշակութային ժառանգությունը «վերածնելը». այստեղից էլ՝ դարաշրջանի անվանումը, որը շրջանառության մեջ է դրել իտալացի նկարիչ և ճարտարապետ Ջորջո Վազարին (Բարձր Վերածնության շրջան):

«Վերածնունդ» եզրույթը ժամանակակից նշանակությամբ գործածել է ֆրանսիացի պատմաբան Ժյուլ Միշլեն XIX դարում: «Վերածնունդ» փոխաբերաբար նշանակում է նաև մշակույթի ծաղկում: Վերածնունդը պայմանավորված էր ավատական արտադրահարաբերությունների քայքայումով և Եվրոպայի տնտեսապես առավել զարգացած երկրներում ու շրջաններում վաղ կապիտալիստական արտադրահարաբերությունների սաղմնավորումով:

Վերածնունդն առավել ցայտուն դրսևորվել է Իտալիայում, որտեղ դեռևս XIII–XIV դարերում այն կանխագուշակել են բանաստեղծ Ալիգիերի Դանտեն, նկարիչ Ջոտտոն և ուրիշներ: Այդ դարաշրջանում նոր աշխարհայացքի կրողների՝ բանաստեղծների, փիլիսոփաների, արվեստի գործիչների ստեղծագործության մեջ առանցքայինը մարդն էր. նա հռչակվել է տիեզերքի կենտրոն, բնության առավել կատարյալ ստեղծագործություն: Բյուզանդացի վտարանդի գիտնականներն Իտալիայում XV դարում թարգմանել են հին հունական գրեթե բոլոր բանաստեղծների և փիլիսոփաների երկերից, ճշգրտել և վերահիմաստավորել միջին դարերից հայտնի անտիկ գործերը, որոնց տարածմանը նպաստել է տպագրության գյուտը (Յոհան Գուտենբերգ, 1455 թ.) Գերմանիայում:

Արվեստաբանները կերպարվեստի և ճարտարապետության նյութի հիման վրա պարբերացրել են Վերածննդի մշակույթը՝ Վաղ (XV դար, իտալական

հումանիստական գրականության մեջ՝ XIV դարից), Բարձր (XV դարի վերջ – XVI դարի 1-ին քառորդ) և Ուշ (XVI դար) Վերածնունդ:

XV դարի վերջին – XVI դարի սկզբին Վերածննդի մշակույթը տարածվել է Ֆրանսիայում, Նիդեռլանդներում, Գերմանիայում, Անգլիայում, Իսպանիայում և Եվրոպայի այլ երկրներում:

Վերածննդի փիլիսոփայությունը հակաֆեոդալական ու հակաեկեղեցական էր. տարածվել են պանթեիզմի (փիլիսոփայական ուսմունք, համաձայն որի՝ աստված և բնությունը նույնական են) ու նորպլատոնականության (անտիկ փիլիսոփայության վերջին խոշոր ուղղությունը) գաղափարները, վերածնվել են ստոիցիզմը (հին հունական ստոիկյան դպրոցի փիլիսոփայությունը, որի կենտրոնում բարոյագիտությունն էր) և էպիկուրականությունը (հույն փիլիսոփա Էպիկուրի ուսմունքը): Փիլիսոփայության հիմքում դիալեկտիկական ուսմունքն էր, որն ընդունում էր կեցության հավերժական շարժումն ու փոփոխականությունը, «հակադրությունների համընկնման» (Նիկոլա Կուզանցի, Ջորդանո Բրունո) և պայքարի՝ որպես աշխարհում տեղի ունեցող ամեն ինչի պատճառի մասին ուսմունքը (Բեռնարդինո Տելեզիո):

Բնագիտության մեջ տեղի են ունեցել խոշոր տեղաշարժեր: Աստղագիտության հաջողություններից էին աշխարհի արևակենտրոն համակարգի ստեղծումը (Նիկոլայ Կոպեռնիկոս) և երկնային մարմինների շարժման օրենքների հայտնագործումը (Յոհան Կեպլեր):

Նշանակալի առաջընթաց է արձանագրվել տեխնիկայում, հատկապես հանքարդյունահանման, մետալուրգիայի և նավաշինության ոլորտներում: Կիրառվել են ջրային շարժիչներ, մետաղահղկիչ հաստոցներ, հանքափոր մեքենաներ, օդափոխման և այլ մեխանիզմներ:

Զարգացել է նաև պատմական գիտությունը. պատմաբանները հասարակական գործընթացի շարժիչ ուժ են համարել կուսակցությունների և սոցիալական խմբերի քաղաքական պայքարը. Նիկոլո Մաքիավելին փորձել է բացահայտել հասարակական զարգացման օրենքները և նյութական շահերը: Նախաձեռնել են հասարակական կատարյալ կառուցվածքի մշակման փորձեր (Թոմաս Մորի «Ուտոպիա», Տոմազո Կամպանելլայի «Արևի քաղաք» և այլն):

Գրականության հիմնական թեման դարձել է մարդը. այստեղից էլ՝ ռեալիստական տարրերի ու միտումների շեշտված զարգացումը (Վերածնության ռեալիզմ): Ստեղծվել են գրական մնայուն արժեքներ՝ Ֆրանսուա Ռաբլեի «Գարգանտյուան և Պանտագրյուելը», Միգել Սերվանտեսի «Դոն Կիխոտ» վեպերը, Վիլյամ Շեքսպիրի դրամաները և այլ երկեր, որոնք միահյուսել են անտիկ ու ժողովրդական մշակույթների կոմիկականի և ողբերգականի տարրերը: Ֆրանչեսկո

Պետրարկայի սոնետները, Ջովաննի Բոկաչչոյի նովելները, Միշել դե Մոնտենի «Փորձերը» էսսեն և այլ ստեղծագործություններ պարունակել են Վերածննդին բնորոշ գաղափարներ:

Պրոֆեսիոնալ երաժշտությունը զարգացել է բանահյուսության ազդեցությամբ, առանձնացել է նոր՝ մարդասիրական աշխարհընկալմամբ և դրսևորվել առաջադեմ երաժշտական գործիչների ստեղծագործություններում: Աշխարհիկ վոկալ և գործիքային երաժշտության մեջ ստեղծվել են նոր ժանրեր (մեներ գ, օրատորիա, կանտատ, օպերա և այլն), զարգացել է կատարողական արվեստը, գրվել են երաժշտությանը վերաբերող գրքեր:

Վերածննդի ճարտարապետությունը դիմել է անտիկ՝ հունա-հռոմեական շինարվեստի գեղագիտական հիմունքներին, հնարքներին ու ձևերին: Առաջնակարգ տեղ են գրավել աշխարհիկ կառույցները՝ հասարակական շենքերը, պալատները և քաղաքային տները:

Նիդեռլանդներում և եվրոպական այլ երկրներում XV դարում ճարտարապետությունը պահպանել է ավանդական գոթական ոճը (XII–XVI դարերում Եվրոպայում իշխող ոճ), սակայն մշակվել են նաև տեղական՝ ազգային ոճեր: Ուշ Վերածննդի ճարտարապետությանը բնորոշ են ռացիոնալիզմը, մաներիզմի (ուղղություն XVI դարի եվրոպական արվեստում) և բարոկկոյի (ոճ XVI դարի վերջ – XVIII դարի կեսի եվրոպական արվեստում) տարրերը: Նրան հատուկ ներդաշնակ կառուցիկությունը տեղը զիջել է ներքին լարվածությանը, կառույցը հարմարեցվել է քաղաքաշինական մտահղացմանը, համալիրին, բնական միջավայրին (Միքելանջելո, Վինյոլա, Ջուլիո Ռոմանո, Բալտազար Պերուցցի):

Կերպարվեստում նույնպես նկարիչներն ու քանդակագործները, հենվելով գիտության և տնտեսության նոր նվաճումների վրա, ստեղծագործաբար օգտվելով անտիկ արվեստի ժառանգությունից, ձգտել են ճշմարտացի պատկերել մարդուն ու շրջակա միջավայրը (Իտալիայում՝ Մազաչչոն, Սանդրո Բոտիչելլին, Դոնատելլոն, Տիցիանը, Նիդեռլանդներում՝ Լուկաս Լեյդենցին, Ռոջեր վան դեր Վեյդենը, Գերմանիայում՝ Ալբերտ Դյուրերը, Ադամ Կրաֆտը, Ֆրանսիայում՝ Ժան Ֆուքեն և ուրիշներ):

Վերածննդի թատրոնին բնորոշ էին իրականության հակասությունների վերամարմնավորումը, ժողովրդական արվեստի ավանդույթների զարգացումը, սկզբնավորվել է պրոֆեսիոնալ թատրոնը, դրամատուրգիայի և դերասանական արվեստի տեսությունը, կառուցվել են առաջին թատերական շենքերը:

Վերածննդին բնորոշ հատկանիշներ նկատվել են նաև Հայաստանում՝ դեռևս X–XIV դարերում: Հայկական Վերածննդի սկզբնավորումը նույնպես պայմանավորված էր քաղաքների, արհեստների, առևտրի բուռն զարգացմամբ: Երկրում ձևավորվել է

ընդդիմադիր մտածողություն, արմատապես փոխվել է վերաբերմունքը մարդու նկատմամբ, իշխող է դարձել մարդասիրությունը:

Այս միտումներն արտահայտվել են գրականության մեջ («Սասնա ծռեր» էպոս, Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմ), արմատական տեղաշարժեր են նկատվել իրավունքի (Մխիթար Գոշ, Սմբատ Սպարապետ, Ներսես Լամբրոնացի և ուրիշներ), երաժշտության (Գրիգոր Խուլ, Գևորգ Սկևռացի, Ներսես Շնորհալի և ուրիշներ), թատրոնի, ճարտարապետության, կերպարվեստի և մշակույթի այլ բնագավառներում: Ստեղծվել են կրթության և գրչության կենտրոններ, համալսարաններ, մատենադարաններ, ծաղկել են եկեղեցաշինությունը, մանրանկարչությունը, կիրառական արվեստն ու արհեստները:

<u>Հայկական ճարտարապետություն</u>

Հայկական ճարտարապետությանը բնորոշ են զարգացման բարձր մակարդակը, գեղարվեստական հարուստ ավանդույթները և հատկապես ազգային ինքնատիպությունը, որը, բացի բնական պայմաններից, կացութաձևից և ժողովրդական ակունքներից, պայմանավորված է նաև տեղական շինանյութերի, հատկապես տուֆի բազմազանությամբ ու գեղարվեստաֆիզիկական հատկանիշներով:

Հայկական ճարտարապետությունը խարսխված է ազգային մշակույթի հարուստ ավանդույթների վրա: Կարևոր են նաև այլ ժողովուրդների հետ մշակութային շփումներն ու փոխազդեցությունները: Հայրենի (<u>Թորոս Թորամանյան</u> և ուրիշներ) և օտար (Դյուբուա, Շառլ Դիհլ, Յոզեֆ Ստրժիգովսկի, <u>Նիկողայոս Մառ</u> և ուրիշներ) հեղինակներից շատերը նշել են հայկական միջնադարյան ճարտարապետության ազդեցությունը Արևմտյան Եվրոպայի ճարտարապետության վրա: Հայկականն էլ իր հերթին ազդեցություն է կրել այլ երկրների ճարտարապետությունից, ինչպես մ. թ. ա. III դարում՝ հայկական հելլենիզմի շրջանում՝ Հին Հունաստանի ճարտարապետությունից. լավագույն օրինակը հունա-հռոմեական պերիպտեր տիպի <u>Գառնիի</u> տաճարն է (I դար): Ճարտարապետությունը Հայաստանում ամենազարգացած արվեստներից է, քանի որ այն լավագույնս է արտացոլում հայ ժողովրդի ստեղծարար ու արարող հոգեկերտվածքը: Հայաստանն անվանում են «քարի երկիր». Այն հարուստ է ամենատարբեր գույների ու երանգների գործնականում բոլոր բնական շինաքարերով՝ տուֆ, մարմար, բազալտ, տրավերտին, գրանիտ և այլն:

X–XI դարերում՝ հայկական պետականության վերականգնման շրջանում, Հայաստանի հյուսիսում կառուցվեցին Հաղպատի ու Սանահինի վանքերը, Վանա լճի Աղթամար կղզում՝ Սուրբ Խաչ եկեղեցին, ծաղկման հասավ Բագրատունյաց

Հայաստանի հիասքանչ մայրաքաղաքը՝ «տիեզերական քաղաք» Անին: XII – XIV դարերում ստեղծվեցին հայկական պաշտամունքային ճարտարապետության գլուխգործոցները՝ Տաթևի, Կեչառիսի ու Հաղարծինի վանքերը, Գոշավանքը, Հովհաննավանքը, Սաղմոսավանքը, Նորավանքը, Գանձասարի վանքը և բազմաթիվ այլ ճարտարապետական կոթողներ: Այս շրջանում է կառուցվել նաև ժայռափոր Գեղարդավանքը: XV – XIX դարերում պատմական Հայաստանի տարածքում կառուցվել են հազարավոր վանքեր ու եկեղեցիներ, որոնցից յուրաքանչյուրը, որպես ճարտարապետական հուշարձան, ունի բացառիկ արժեք: Այսօր նույնպես Հայաստանում եկեղեցիները կառուցվում են միջնադարյան հայկական ճարտարապետության կանոններով:

Կեչառիս

Նորավանք



Գոշավանք

Գանձասար

Միջնադարյան ճարտարապետության նշանավոր երք գործիչներն են Մանուելը, Տրդատը և Մոմիկը:

Հայկական միջնադարյան ճարտարապետության փայլուն օրինակներ են նաև մեզ հասած իշխանական բերդերն ու ամրոցները, կամուրջներն ու իջևանատները, որոնցից առանձնանում են Ամբերդի ամրոցն ու Սելիմի իջևանատունը: Դժվար է գերագնահատել հայկական ճարտարապետության ավանդը համաշխարհային ճարտարապետության զարգացման գործում: ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային մշակութային ժառանգության ցանկում են ընդգրկված Սուրբ Գայանե և Սուրբ

Հռիփսիմե եկեղեցիները, Էջմիածնի Մայր տաճարը, Զվարթնոցի ու Գառնիի տաճարները, Հաղպատի, Սանահինի ու Գեղարդի վանքերը

Հայաստանը պատկառելի ավանդ ունի համաշխարհային մշակույթի զարգացման գործում: Հայկական մշակութային ժառանգության կարևոր բաղկացուցիչներից մեկը խաչքարերի՝ աշխարհում եզակի մշակույթն է: Հսկայական քարե սալերի վրա փորագրված ժանեկահյուս ու փորագրազարդ խաչերը, որոնք խորհրդանշում են Քրիստոսի հաղթանակը մահվան նկատմամբ, Հայաստանում կերտվում են արդեն ավելի քան մեկ հազարամյակ: Մոմիկի, Վարդանի,Պողոսի և մյուս հռչակավոր քարգործ վարպետների հիասքանչ և մեկը մյուսին չկրկնող աշխատանքներով կարելի է հիանալ Հայաստանում ամենուր գտնվող հնադարյան գեղատեսիլ վանքերում: Աշխարհում խաչքարերի ամենամեծ հավաքածուն համարվում է Նորատուսի գերեզմանատունը:

Գոշավանք

Ցաղաց քար

Նորավանք

Այս շրջանում էլ Հայաստանում ծնվեց ձեռագիր մատյանների էջերը նկարազարդելու արվեստը՝ մանրանկարչությունը, որի անգերազանցելի վարպետներից են Թորոս Ռոսլին, ո Սարգիս Պիծակն ու Մոմիկ Ծաղկողը: Նրանց մանրանկարներին կարելի է ծանոթանալ աշխարհում հին ձեռագրերի խոշորագույն պահոցներից մեկում՝ Երևանի Մատենադարանում:



Թորոս Ռոսլին

Սարգիս Պիծակ

Մոմիկ

Միջնադարում Հայաստանում ծաղկում է ապրում ազգային պատմագիտական դպրոցը, որի զարգացումը կապված է Մովսես Խորենացու, Ագաթանգեղոսի, Փավստոս Բուզանդի, Ղազար Փարպեցու, Ստեփանոս Տարոնացու, Կիրակոս Գանձակեցու անունների հետ: Ժամանակի խոշորագույն իրավագետ ու առակագիր Մխիթար Գոշը կազմում է հայկական օրենքների առաջին համահավաք ժողովածուն՝ «Դատաստանագիրքը»: Իսկ մաթեմատիկոս ու տիեզերագետ Անանիա Շիրակացու և մեծ բժշկապետ Մխիթար Հերացու աշխատությունները հռչակվում են նաև Հայաստանից շատ ու շատ հեռու: X դարում Հայաստանում սկսվում է վաղ հայկական Վերածննդի դարաշրջանը: Նարեկի վանքում իր հոգևոր-քնարական պոեմներն է գրում աստվածաբան, փիլիսոփա ու բանաստեղծ Գրիգոր Նարեկացին: Մի քանի հարյուրամյակ ընդգրկող այս դարաշրջանի վառ ներկայացուցիչներից են նաև շարականների հեղինակ, Ամենայն հայոց կաթողիկոս Ներսես Շնորհալին և բանաստեղծ Կոստանտին Երզնկացին:

Հայկական երգարվեստի ու պարարվեստի և դուդուկի մոգական հնչյունների արմատները գնում են դարերի խորքը: Հայկական երաժշտական արվեստում ուրույն տեղ ունի աշուղական մշակույթը.

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրելով X-XIV դարերի մշակույթը իրավամբ կարող ենք ասել,որ Հայաստանն ու Կիլիկիայի հայկական թագավորությունը ապրել են մի շրջան,երբ առկա են եղել Վերածնությանը բնորոշ երևույթներ թե՛ տնտեսության և թե՛ մշակույթի բնագավառներում: Հայ ժողովուրդը դարեր շարունակ եղել է մշակույթի բարձր կրող: Մենք ունեցել ենք փայլուն «Ոսկեդար»,որը խորը հետք է թողել հայ իրականության մեջ: Եվ այդ Ոսկեդարը չէր կարող չվերածնվել X-XIV դարերում: Հայ իրականության մեջ Վերածնության դարաշրջանին բնորոշ երևույթները չխորացան և չհասան այն մակարդակին,որին հասավ Եվրոպան: Մշակույթի զարգացումը կանգ առավ նախնական փուլում: Ժողովուրդը կորցրեց իր անկախությունը: Սելջուկյան արշավանքները կասեցրին տնտեսական կյանքի զարգացումը, իսկ մոնղոլական արշավանքներն ու տիրապետությունը երկիրը տարան դեպի տնտեսական քայքայման,արգելակելով հասարակական կյանքի առաջընթացը: Այնուամենայնիվ դարաշրջանի մշակույթը խորը հետք թողեց ճարտարապետության, պատմագրության, իրավական մտքի և փիլիսոփայության զարգացման վրա:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ստեփան Մելիք-Բախշյան,Ժամկոչյան «Հայ ժողովրդի պատմություն». Երևան 1975թ.

2. Ստեփանոս Օրբելյան «Պատմություն նահանգին Սիսական»

3. Թովմա Արծրունի «Պատմություն տանն Արծրունյաց»

ԹԵՄԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆ

«Մտագրոհ»-Խմբային աշխատանքի միջոցով աշակերտները կներկայացնեն մշակույթի տարբեր բնագավառները:

1-ին խումբ

- Ներկայացնել մշակույթի զարգացման առանձնակատկությունները IX-XIV դարերում:

2-րդ խումբ

- Ներկայացնել նշանավոր դպրոցները,նրանց դերն ու նշանակությունը:

3-րդ խումբ

- Ծանոթացնել դարաշրջանի պատմագիրներին:

4-րդ խումբ

- Ներկայացնել դարաշրջանի ճարտարապետական կոթողները:

«Զբոսանք պատկերասրահում»: